

Երջանկայիշատակ Թորգոմ Պատրիարք Մանուկեանին

ԵՐԳ ՀՐԱԺԵՇՏԻ

Ուշ գիշերին, ծովին դիմաց,
Կ'ընեմ հաշիւը իմ կեանքին:
Անցեալս հիմա ինչպէս աւազ
Փռուած է ծով կեանքի շուրթին:

Ուշ գիշերին, ծովին դիմաց,
Ինքզինքիս հետ կը խօսակցիմ:
Գիրք մը ինչպէս սիրտըս բացած
Կը թերթատեմ օրերը հին....:

Ուշ գիշերին, ծովին դիմաց,
Թերթերն հատ հատ այս ճոխ գրքին
կը պատահեմ խանդավառուած
Ու կը նետեմ հովի գրկին:

Ի՛նչ նազանքով՝ թերթերն հատ հատ
Շուրջ-պարեցին, դողդղացին,
Երգ ու արցունք իրար խառնած
Սուրճ ալիքները գրկեցին:

Ուշ գիշերին, ծովին դիմաց
Թառած պատին այս հին վանքին
Ինչպէս արծիւ թեւեր պարզած
Կ' երգեմ երգը Հրաժեշտի:

Բագրատունի



Հանդիսաւոր թափօրով Հանգուցեալ Պատրիարք Սրբազան Հօր
յուղարկաւորութիւն դէպի Սուրբ Փրկիչ Գերեզմանատուն: